



ԳործՇԴՅ /0048/02/13

ՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«29» նոյեմբերի 2013թ

ք.Մարալիկ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

նախագահությամբ՝ դատավոր
քարտուղարությամբ՝
մասնակցությամբ՝

Մ.Մարտիրոսյանի
Հ.Դարբինյանի

հայցվոր՝

Պ.Պետրոսյանի

հայցվորների ներկայացուցիչ՝

Ա.Դավթյանի

երրորդ անձի ներկայացուցիչներ՝

Գ.Գրիգորյանի

Ա.Հախվերդյանի

Դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցադիմումի Պայծառ Մնացականի Պետրոսյանի/անձնագիր՝ AM 0858236 տրված 04.09.2012թ 016-ի կողմից/, Տիգրան Ալեքսանդրի Պետրոսյանի/անձնագիր AH 0664794 տրված 05.09.2008թ 016-ի կողմից/, Դիանա Ալեքսանդրի Բաղդասարյանի/անձնագիր AM 0620862 տրված 01.02.2012թ 016-ի կողմից/, Լյուդա Գեուրգի Պետրոսյանի/անձնագիր՝ AC 0497726 տրված 11.01.1999թ 017-ի կողմից՝ ընդդեմ Ալինա Ալեքսանդրի Մելիքսեթյանի, Կորյուն Վահրամի Մելիքսեթյանի, Մեուկ Վահրամի Մելիքսեթյանի, Ասյա Վահրամի Մելիքսեթյանի, Նարա Վահրամի Մելիքսեթյանի, երրորդ անձ Շիրակի մարզպետարանի՝ բնակտարածության օգտագործման իրավունքը կորցրած ճանաչելու պահանջի վերաբերյալ

ՊԱՐԶԵՑ

Գործի դատավարական նախապատմությունը

Պայծառ Պետրոսյանը եւ մյուսները 25.02.2013թ հայցադիմում են ներկայացրել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Ալինա Ալեքսանդրի Մելիքսեթյանի, Կորյուն Վահրամի Մելիքսեթյանի, Մեուկ Վահրամի Մելիքսեթյանի, Մեղա/Ասյա/ Վահրամի Մելիքսեթյանի/ Նառա Վահրամի Մելիքսեթյանի՝ բնակտարածության օգտագործման իրավունքը կորցրած ճանաչելու պահանջի մասին:

28.02.2013թ հայցադիմումն ընդունվել է վարույթ եւ նշանակվել է նախնական դատական նիստ:

11.04.2013թ որոշում է կայացվել քաղաքացիական գործով Շիրակի մարզպետարանին որպես երրորդ անձ ներգրավելու մասին:

16.10.2013թ որոշում է կայացվել գործով դատաքննությունն անցկացնելու մասին:

Հայցվորների իրավական դիրքորոշումը

Հայցվորները հայցադիմումով դատարանին հայտնել է, որ իրենք նույն ընտանիքի անդամներ են, իրենցից Պայծառ Պետրոսյանը հանդիսանում է Տիգրան, Դիանա Պետրոսյանների մայրը, իսկ Լյուդա Պետրոսյանը Տիգրան Պետրոսյանի կինն է, պատասխանողներից Ալինա Մելիքսեթյանը Պայծառ Պետրոսյանի աղջիկն է եւ Տիգրան, Դիանա Պետրոսյանների քույրը, իսկ մյուս պատասխանողները՝ Կորյուն, Սեւակ, Ասյա եւ Նառա Մելիքսեթյանները Ալինա Մելիքսեթյանի երեխաներն են:

Ալինա Մելիքսեթյանը 1988թ նոյեմբերին թեպետ գյուղապետարանի տեղեկանքում նշված է 31.03.1989թ ամուսնացել է Սարալանջ գյուղի բնակիչ Վահրամ Մելիքսեթյանի հետ եւ Գյումրիից տեղափոխվել է Շիրակի մարզի Սարալանջ գյուղ, այնտեղ են ծնվել նրա չորս երեխաները եւ մինչ օրս էլ բնակվում են Սարալանջ գյուղի թիվ 1 փողոցի թիվ 14 տանը:

Երկրաշարժի հետեւանքով իրենց բնակարանը, որը գտնվում էր ք. Գյումրի Կոշտոյան 72, բն.6 հասցեում փլվել է եւ մինչեւ 2003թ իրենք բնակվել են ժամանակավոր տնակ-կացարանում, որտեղ երբեմիցէ չեն բնակվել պատասխանողները:

Շիրակի մարզպետի 05.12.2003թ թիվ 301 որոշմամբ իրենց ընտանիքին հատկացվել է ք. Գյումրի, Երեւանյան խճուղի 143ա շենքի թիվ 1 երկուսենյականոց բնակարանը, ուր տեղափոխվել եւ շուրջ 10 տարի բնակվում են իրենք 6 անձով՝ այդ թվում Տիգրան Պետրոսյանի երկու անչափահաս երեխաները:

Թեպետ Ալինա Մելիքսեթյանը ամուսնացել է բնակվում է Սարալանջ գյուղում, սակայն մնացել է իրենց հասցեում գրանցման մեջ, ավելին չգիտես ինչու այնտեղ հաշվառվել են նաեւ նրա 4 երեխաները, ովքեր նույնիսկ չգիտեին ոչ իրենց նախկին, ոչ էլ այժմյան բնակարանի գտնվելու վայրը: Այդ ձեւական սուկ փաստաթղթային գրանցման պատճառով Շիրակի մարզպետի թիվ 301 որոշման մեջ ներառվել են նաեւ նրանց անունները:

Պատասխանողները չլինելով իրենց ընտանիքի անդամները եւ որեւէ առնչություն չունենալով իրենց հետ, չբնակվելով Գյումրի քաղաքում ներառվել են բնակարանի հատկացման որոշման մեջ: Խնդիրը նաեւ կայանում է նարնում, որ բնակարանի հատկացման ժամանակ կենդանի է եղել նաեւ Ալեքսանդր Գրիգորի Պետրոսյանը եւ փաստացի իրենց ընտանիքը բաղկացած էր 7 անձից եւ իրենց կորցրած սենյակների չափով, այն է 2 սենյակ՝ առանց իսկ պատասխանողների հաշվառման իրենք ստանալու էին, այսինքն պատասխանողների իրենց հասցեում հաշվառված լինելը